Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 05-11-2021 թ. որոշմամբ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ 2/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.852629
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-04-08
1.5 ՀՎՀՀ-ն		02636688
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60722215
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		Fund@agbu.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Վասկեն Յակուբյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	39	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	50,000	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հայկական Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ 2.0	65,553,084
	Կանոնադրական նպատակներ	29,017,439
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	28,392,000	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Դեղորայք	43,198,000
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Հայկական Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ 2.0	6,851,000	
Աջակցություն Սիրիահայ փախստականներին	69,512,000	
Այբ կրթական հանգույց հիմնադրամի հետ կրթական ծրագիր	5,500,000	
Մշակութային միջոցառումներ	1,742,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	267,203,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	83,605,000	

Նշումներ՝

Հաշվետվությունը փոփոխված է հաշվի առնելով ՊԵԿ կողմից ուղարկված թիվ 11-18/84070-2021 գրության մեջ նշված նկատառումները:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___44___ թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Համախմբված ֆինանսական հաշվետվություններև Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»

31 դեկտեմբերի 2020թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	8
Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)	11
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի հոգաբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի (Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմքեր»* բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

- Խումբն իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում չի ներառել «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի (70% բաժնեմասնակցություն) ֆինանսական հաշվետվությունները: Փոխարենը՝ ներդրված գումարը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլել է որպես «Ներդրումներ կապակցված կազմակերպությունում», ինչը մեր կարծիքով չի համապատասխանում ՖՀՄՍ 10.4 *Համախմբված ֆինանսական հաշվետվություններ* պահանջներին: Մենք անկարող էինք ձեռք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ում ներդրման ազդեցության վերաբերյալ: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել թե արդյոք առկա է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու անհրաժեշտություն:

- Մեր գնահատմամբ Խմբի կողմից ներդրված ներքին հսկողության համակարգը բավարար չէ դեղորայքի ստացման և բաշխման պատշաճ փաստաթղթաշրջանառությունն ապահովելու համար: Հետևաբար, մեր կողմից կիրառված աուդիտորական ընթացակարգերի արդյունքում մենք հնարավորություն չունենք որոշելու, թե արդյոք առկա է հաշվետու ամսաթվի դրությամբ պաշարների գումարը ճշգրտելու անհրաժեշտություն:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա առանձին ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորի կողմից, որը 2020թ. հոկտեմբերի 29-ին թվագրված իր աուդիտորական հաշվետվությունում արտահայտել է առանց վերապահման կարծիք: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 30-ում, այդ ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացվել են Խմբի ղեկավարության կողմից: Մեր կողմից աուդիտի են ենթարկվել նաև այդ վերաներկայացումները: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Grant Thornton

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

4 նոյեմբերի 2021թ.

Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Պերճ Սեդրակյան

Խորհրդի նախագահ

Սեմ Սիմոնյան

Խորհրդի անդամ

Երվանտ Զորյան

Խորհրդի անդամ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	7,651	11,518	11,958
Ներդրումներ կապակցված կազմակերպությունում	5	67,930	67,930	13,691
Տրամադրված փոխառություններ	6	38,992	24,537	-
		114,573	103,985	25,649
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	7	43,917	15,608	78,314
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	13,704	16,688	108,376
Ժամկետային ավանդներ		-	10,000	54,269
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	171,440	115,684	39,177
		229,061	157,980	280,136
Ընդամենը ակտիվներ		343,634	261,965	305,785
Պարտավորություններ և զուտ ակտիվներ				
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	3,335	5,236	4,536
Ստացված փոխառություններ	11	-	131,517	73,380
		3,335	136,753	77,916
Ընթացիկ պարտավորություններ				
Հետաձգված եկամուտ	12	185,650	105,072	203,320
Ստացված փոխառություններ	11	145,431	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	16,628	20,289	18,723
		347,709	125,361	222,043
Զուտ ակտիվներ				
Կուտակված արդյունք (անսահմանափակ)	14	(7,410)	(149)	5,826
		(7,410)	(149)	5,826
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		343,634	261,965	305,785

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. նոյեմբերի 4-ին:

Վասկեն Յակուբյան — Ռուզաննա Առաքելյան

Գլխավոր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Շնորհներից եկամուտ	15	83,605	777,339
Դրամաշնորհային ծախսեր	16	(83,605)	(777,339)
		-	-
Վարձակալական եկամուտ	17	177,014	195,978
Շենքերի պահպանման հետ կապված ծախսեր	18	(94,345)	(98,146)
		82,669	97,832
Վարչական և ընդհանուր ծախսեր	19	(80,433)	(91,615)
Ֆինանսական եկամուտ	20	2,055	2,841
Ֆինանսական ծախս	20	(8,820)	(11,174)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս	21	(2,732)	(3,273)
Արդյունք մինչև հարկերը		(7,261)	(5,389)
Շահութահարկի գծով ծախս	22	-	(586)
Տարվա արդյունք		(7,261)	(5,975)
Զուտ ակտիվները տարվա սկզբում (մինչև վերաներկայացումը)		(9,364)	10,694
Համախմբման հետ կապված վերաներկայացման ազդեցությունը	30	(13,802	(3,577)
Այլ ճշգրտումների արդյունքում վերաներկայացման ազդեցությունը	30	23,017	(1,291)
Զուտ ակտիվները տարվա սկզբում (վերաներկայացված)		(149)	5,826
Տարվա արդյունք		(7,261)	(5,975)
Զուտ ակտիվները տարվա վերջում		(7,410)	(149)

Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա արդյունք		(7,261)	(5,975)
Ճշգրտումներ՝			
Մաշվածություն և ամորտիզացիա		5,432	5,104
Շնորհներից եկամուտ		(83,605)	(777,339)
Շնորհ ստացած դեղորայքի ծախսագրում		39,402	203,516
Շահութահարկի գծով ծախս		-	586
Ֆինանսական եկամուտ		(2,055)	(2,841)
Ֆինանսական ծախս		8,820	11,174
Փոխարժեքային տարբերությունից վնաս		2,731	3,275
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		(36,536)	(562,500)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		2,984	91,688
Պաշարների փոփոխություն		-	(30)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		(3,661)	1,566
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ		(37,213)	(469,276)
Ստացված շնորհներ		94,571	539,010
Վճարված շահութահարկ		-	(586)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		57,358	69,148

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ներդրումներ կապակցված կազմակերպությունում		-	(54,239)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,565)	(4,664)
Տրամադրված փոխառություններ		(14,700)	(30,100)
Ժամկետային ավանդներ, զուտ		10,000	44,269
Ստացված տոկոսային եկամուտ		298	2,368
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(5,967)	(42,366)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Փոխառություններից մուտքեր	28	-	53,620
Ֆինանսավորման գործունեությունից ստացվածզուտ դրամական միջոցներ		-	53,620
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ		51,391	80,402
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		4,365	(3,895)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		115,684	39,177
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում		171,440	115,684

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի (Հիմնադրամ) և դուստր ընկերության (միասին՝ Խումբ)՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Հիմնադրամը հիմնադրվել է ԱՄՆ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամի կողմից: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2015թ. ապրիլի 8-ին:

Հիմնադրամը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, հոգևոր և այլ հանրօգուտ նպատակներ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դուստր ընկերությունն է «Արքուս» ՍՊԸ-ն: «Արքուս» ՍՊԸ-ն (100 % բաժնեմասնակցություն) Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2017թ. նոյեմբերի 20-ին: «Արքուս» ՍՊԸ-ն ևս ունի դուստր ընկերություն՝ «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ, որի 70% սեփականատերն է:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2020թ. կազմել է 50 մարդ (2019թ.՝ 42 մարդ):

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մելիք Ադամյան, 2/2:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներե:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներիե*:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով կամ իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,*
- *Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը (ՖՀՄՍ 3 փոփոխություններ),*
- *Էականության սահմանումը (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ),*
- *Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),*
- *COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ (ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- *«Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)ե (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրերե*
- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)*
- *Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
- *2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):*
- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկե (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*

2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունը.

31 դեկտեմբերի 2020թ. և 31 դեկտեմբերի 2019թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ
«Արքուս» ՍՊԸ	100	Հայաստան	08.04.2015թ.

«Արքուս» ՍՊԸ-ն հանդիսանում է «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի 70% սեփականատերը: Այնուամանայնիվ, ղեկավարության համոզմամբ «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունը պատկանում է 30% փոքրամասնության սեփականատիրոջը, այդ իսկ պատճառով տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված չեն «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունները:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Խումբը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և զուտ ակտիվների սկզբնական մնացորդները: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը (տե՛ս ծանոթագրություն 30):

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր դուստր ընկերության՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների եկամուտը կամ ծախսերը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-	1 - 8 տարի
Տնտեսական գույք	-	1 - 8 տարի
Այլ	-	1 - 8 տարի:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

3.5 Պաշարներ

Պաշարները հիմնականում ներառում են «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված դեղորայքը, որոնք պահվում են բարեգործական նպատակով օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված գնահատման հաշվետվություններում արտացոլված արժեքներից նվազագույնով: «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի գնահատման հաշվետվություններում արտացոլվում է նշված դեղորայքի՝ Հայաստանյան շուկայում շրջանառվող գինը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված փոխառությունները և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է տարվա արդյունքում: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է տարվա արդյունքում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոց-ների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.8 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական արդյունքի, ո՛չ էլ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.11 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում շնորհների իրացումից և հիմնադրից անհատույց օգտագործման նպատակով ստացված շենքերի վարձակալությունից:

Շնորհներից եկամուտ

Այս եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.8-ում:

Վարձակալական եկամուտ

Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալական եկամուտը ճանարվում է յուրաքանչյուր ամսվա վերջում, երբ համապատասխան հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում:

Ֆինանսական եկամուտ

Ֆինանսական եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	18,794	9,375	183	28,352
Ավելացում	3,457	1,207	-	4,664
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,251	10,582	183	33,016
Ավելացում	-	1,565	-	1,565
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,251	12,147	183	34,581
Կուտակված մաշվածություն				
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	12,673	3,654	67	16,394
Տարվա հաշվարկ	3,126	1,942	36	5,104
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,799	5,596	103	21,498
Տարվա հաշվարկ	3,061	2,334	37	5,432
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,860	7,930	140	26,930
Հաշվեկշռային արժեք				
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,452	4,986	80	11,518
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,391	4,217	43	7,651

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամաշնորհային ծախսեր	1,901	1,695
Շենքերի պահպանման հետ կապված ծախսեր	574	425
Վարչական և ընդհանուր ծախսեր	2,957	2,984
	5,432	5,104

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 14,075 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,422 հազար դրամ):

5 Ներդրումներ կապակցված կազմակերպությունում

Հազար դրամ

	2020թ.	2019թ.
Տարեսկզբի մնացորդ	67,930	13,691
Ավելացում	-	54,239
Տարեվերջի մնացորդ	67,930	67,930

Ներդրումներ կատարվել են հետևյալ ընկերություններում.

Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	70	Հայաստան	03.09.2018թ.

«Արքուս» ՍՊԸ-ն հանսիսանում է «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի 70% սեփականատերը: Այնուամանայնիվ, ղեկավարության համոզմամբ «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունը պատկանում է 30% փոքրամասնության սեփականատիրոջը, այդ իսկ պատճառով տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված չեն «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի ֆինանսական արդյունքերը:

6 Տրամադրված փոխառություններ

Հազար դրամ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կապակցված կողմերին տրամադրված չապահովված փոխառություններ	-	-	38,992	24,537
	-	-	38,992	24,537

Ոչ ընթացիկ վարկերի և փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

Հազար դրամ

	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կապակցված կողմերին տրամադրված չապահովված փոխառություններ	38,992	24,537	44,800	30,100
	38,992	24,537	44,800	30,100

Իրական արժեքը հաշվարկվում է՝ զեղչելով դրամական միջոցների հոսքերը օգտագործելով փոխառության տրամադրմա
վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

Փոխառությունները բացահայտված են ստորև՝

Անվանում	Պայմանագրային գումար	Արժույթ	Պայմանագրի ժամկետ		Պայմանա-գրային տոկոսա-դրույք (%)	Արդյու-նավետ տոկոսա-դրույք (%)	Մնա
			Սկիզբ	Ավարտ			Մա
Ոչ ընթացիկ							
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	30,100,000	ՀՀ դրամ	26.08.2019թ.	26.08.2023թ.	0.00%	5.75%	
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	14,700,000	ՀՀ դրամ	15.06.2020թ.	15.06.2023թ.	0.00%	5.00%	

Անվանում	Պայմանագրային գումար	Արժույթ	Պայմանագրի ժամկետ		Պայմանա-գրային տոկոսա-դրույք (%)	Արդյու-նավետ տոկոսա-դրույք (%)	Մնա
			Սկիզբ	Ավարտ			Մա
Ոչ ընթացիկ							
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	30,100,000	ՀՀ դրամ	26.08.2019թ.	26.08.2023թ.	0.00%	5.75%	

7 Պաշարներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեղորայք	43,198	14,889
Այլ	719	719
	43,917	15,608

Դեղորայքը ստացվել է «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից և պահվում է բարեգործական նպատակով օգտագործելու համար:

Տարվա ընթացքում պաշարների նվազեցումը ներառում է պաշարների արժեզրկումը մինչև իրացման զուտ արժեք՝ հաշվի առնելով «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված գնահատման ակտերը՝ 106,378 հազար դրամ (2019թ.՝ 104,110 հազար դրամ), որն արտացոլված է հետաձգված եկամուտների շարժում (տե՛ս ծանոթագրություն 12) և բարեգործական նպատակով բաժանված դեղորայքի արժեքը՝ 39,402 հազար դրամ (2019թ.՝ 203,516 հազար դրամ), որն արտացոլված է դրամաշնորհային ծախսերում (տե՛ս ծանոթագրություն 16):

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	11,190	9,366
Այլ դեբիտորական պարտքեր	228	-
	11,418	9,366
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	252	442
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	2,034	6,880
	2,286	7,322
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13,704	16,688

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 23 օր (2019թ.՝ 17 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Խմբի՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար: Ղեկավարության գնահատմամբ Խմբի առևտրային դեբիտորական պարտքերը արժեզրկված չեն:

25(բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերն ամբողջությամբ Հայկական դրամով են:

9 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	305	567
Բանկային հաշիվներ	171,135	115,117
	171,440	115,684

Դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար տե՛ս ծանոթագրություն 25-ը:

10 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Տարեսկզբի մնացորդ	5,236	4,536
Վերադասակարգում հետաձգված եկամտից (տե՛ս ծանոթագրություն 12)	-	2,395
Եկամտի ճանաչում (տե՛ս ծանոթագրություն 15)	(1,901)	(1,695)
Տարեվերջի մնացորդ	3,335	5,236

11 Ստացված փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	145,431	-	-	131,517
	145,431	-	-	131,517

Փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Փոխառությունները բացահայտված են ստորև՝

Անվանում	Պայմանագրային գումար	Արժույթ	Պայմանագրի ժամկետ		Պայմանա-գրային տոկոսա-դրույք (%)	Արդյու-նավետ տոկոսա-դրույք (%)
			Սկիզբ	Ավարտ		
Ընթացիկ						
«Հայկական	150,000	USD	09.10.2018թ.	09.10.2021թ.	5.00%	5.00%
Բարեգործական	38,919,153	AMD	23.04.2019թ.	23.11.2021թ.	5.00%	5.00%
Ընդհանուր Միություն» հիմնադրամ	14,700,000	AMD	09.12.2019թ.	09.12.2021թ.	5.00%	5.00%

Անվանում	Պայմանագրային գումար	Արժույթ	Պայմանագրի ժամկետ		Պայմանա-գրային տոկոսա-դրույք (%)	Արդյու-նավետ տոկոսա-դրույք (%)
			Սկիզբ	Ավարտ		
Ոչ ընթացիկ						
«Հայկական	150,000	USD	09.10.2018թ.	09.10.2021թ.	5.00%	5.00%
Բարեգործական	38,919,153	AMD	23.04.2019թ.	23.11.2021թ.	5.00%	5.00%
Ընդհանուր Միություն» հիմնադրամ	14,700,000	AMD	09.12.2019թ.	09.12.2021թ.	5.00%	5.00%

2021թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանի համար պայմանագրային տոկոսադրույքը զրո տոկոս է:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը վճարումներ չի կատարել:

2021թ. հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 6-ին կատարվել են փոխառությունների գծով կուտակված տոկոսների և մայր գո
դոլարի և 57,445 հազար դրամի չափով:

12 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Տարեսկզբի մնացորդ	105,072	203,320
Ավելացում (ստացված միջոցներ) (տե՛ս ստորև)	94,571	539,010
Ավելացում («Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված դեղորայք)	174,089	244,891
Ստացված դեղորայքի արժեքի ճշգրտում (տե՛ս ծանոթագրություն 7)	(106,378)	(104,110)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին (տե՛ս ծանոթագրություն 10)	-	(2,395)
Եկամտի ճանաչում (ստացված միջոցներ) (տե՛ս ծանոթագրություն 15)	(42,302)	(572,128)
Եկամտի ճանաչում (դեղորայք) (տե՛ս ծանոթագրություն 15)	(39,402)	(203,516)
Տարեվերջի մնացորդ	185,650	105,072

Հետաձգված եկամտի տարեվերջի մնացորդը բաղկացած է հետևյալից՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված միջոցներ	142,452	90,183
«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված դեղորայք	43,198	14,889
	185,650	105,072

Ստացված միջոցների ավելացումները ներկայացնում են հետևյալ կազմակերպություններից ստացված միջոցները՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամ	28,392	159,012
Եվրոպական միություն	65,553	379,998
Այլ	626	-
	94,571	539,010

Ստացված միջոցների մնացորդը ըստ աղբյուրների ներկայացված է ստորև՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամ	111,983	90,183
Եվրոպական միություն	30,469	-
	142,452	90,183

13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	7,038	6,798
Հաճախորդներից կանխավճարներ	5,410	10,788
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	4,180	1,847
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	-	856
	16,628	20,289

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

14 Զուտ ակտիվներ

Կուտակված արդյունք (անսահմանափակ)

Խմբի անսահմանափակ արդյունքում ներառված են գործունեության ընթացքում կուտակված գումարները: Խմբի գործունեության ընթացքում կուտակված արդյունքի գումարների օգտագործմանն առնչվող որևէ օրենսդրական կամ այլ սահմանափակում չկա:

15 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հետաձգված եկամտից եկամուտ՝ ստացված միջոցներ (տե՛ս ծանոթ. 12)	42,302	572,128
Հետաձգված եկամտից եկամուտ՝ դեղորայք (տե՛ս ծանոթագրություն 12)	39,402	203,516
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 10)	1,901	1,695
	83,605	777,339

16 Դրամաշնորհային ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դեղորայքի արժեք (տե՛ս ծանոթագրություն 7)	39,402	203,516
Հատուցումներ աշխատակիցներին	23,346	91,049
Նվիրատվություններ	7,242	13,617
Խորհրդատվական ծախսեր	6,717	2,307
Բժշկական ծախսեր (Մխիթար Հերացի բժշկական կենտրոն)	2,007	2,372
Մաշվածություն	1,901	1,695
Ապահովագրական ծախսեր	1,440	1,848
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	316	22,062
Ենթաշնորհներ (Կամուրջ ծրագիր)	-	409,372
Գործուղման ծախսեր	-	2,532
Այլ	1,234	26,969
	83,605	777,339

17 Վարձակալական եկամուտ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մելիք Ադամյան 2/2 հասցեում գտնվող շենքի վարձակալություն	160,724	177,866
Քանաքեռցի 1 հասցեում գտնվող շենքի վարձակալություն	8,025	18,112
Վարձակալական պայմանագրի դադարեցումից եկամուտ	8,265	-
	177,014	195,978

18 Շենքերի պահպանման հետ կապված ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մելիք Ադամյան 2/2 հասցեում գտնվող շենք		
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	35,264	40,836
Հատուցումներ աշխատակիցներին	40,852	38,157
Քանաքեռցի 1 հասցեում գտնվող շենք		
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	17,296	18,421
Հատուցումներ աշխատակիցներին	359	307
Մաշվածություն	574	425
	94,345	98,146

19 Վարչական և ընդհանուր ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	52,339	59,164
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	12,540	7,206
Ապահովագրական ծախսեր	6,604	6,401
Մաշվածություն	2,957	2,984
Հիմնական միջոցների պահպանման ծախսեր	2,603	7,084
Բանկային ծախսեր	66	2,391
Այլ	3,324	6,385
	80,433	91,615

20 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ստացված փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	6,818	5,138
Տրված անտոկոս փոխառությունների իրական արժեքով զեղչումից ծախս	2,002	6,036
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	8,820	11,174
Տրված անտոկոս փոխառությունների զեղչման հակադարձում	1,757	473
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	277	2,368
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	21	-
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	2,055	2,841
Զուտ ֆինանսական ծախսեր	(6,765)	(8,333)

21 Փոխարժեքային տարբերությունից վնաս

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	4,365	(3,895)
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(7,097)	622
	(2,732)	(3,273)

22 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	178
Հետաձգված հարկ	-	-
	-	178

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(7,261)		(5,389)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019թ.՝ 20%)	(1,307)	18.00	(1,078)	20.00
Չնվազեցվող ծախսեր, զուտ	1,307	(18.00)	1,664	(30.88)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	-	0.00	586	(10.88)

23 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2021թ. հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 6-ին կատարվել են «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամից ստացված փոխառությունների գծով կուտակված տոկոսների և մայր գումարների մարումներ 164,727.32 ԱՄՆ դոլարի և 57,445 հազար դրամի չափով (տե՛ս ծանոթագրություն 11):

24 Ֆինանսական գործիքներ

24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ	38,992	24,537
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,418	9,366
Ժամկետային ավանդներ	-	10,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	171,440	115,684
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	221,850	159,587

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	145,431	131,517
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11,218	8,645
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	156,649	140,162

25 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խմբի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ներդնելու, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություն մշակելու համար: Այս համակարգն ու քաղաքականությունը կանոնավորապես վերանայվում են հոգաբարձուների խորհրդի կողմից՝ շուկայում տեղի ունեցող փոփոխությունները հաշվի առնելու նկատառումով:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ կապակցված կողմից ստացված փոխառություններից և ստացված շնորհներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,094	70,357
	1,094	70,357
Ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	87,593	-
	87,593	-
Զուտ արդյունք	(86,499)	70,357

Հոդված

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,546	537
	1,546	537
Ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	76,490	-
	76,490	-
Զուտ արդյունք	(74,944)	537

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2019թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2019թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2019թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2019թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Տարվա արդյունք	8,650	7,494	7,036	54

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտարժույթով գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Խումբը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Խմբի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Պարտքերի ժամկետները տատանվում են 15-ից 25 օրերի միջև: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ:

Տրված փոխառություններ

Քանի որ բոլոր փոխառությունները տրամադրված են Խմբին կապակցված կազմակերպությանը, ղեկավարությունը հավատացած է, որ դրանք ամբողջովին հավաքագրելի են, և, այդ իսկ պատճառով, դրանց առնչվող պարտքային ռիսկը կառավարելի է:

գ) *Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2020թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա-դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		5.00%	
Մինչև 6 ամիս	11,218	-	11,218
6 ամսից մինչև 1 տարի	-	145,431	145,431
	11,218	145,431	156,649

2019թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա-դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		5.00%	
Մինչև 6 ամիս	8,645	-	8,645
1-2 տարի	-	131,517	131,517
	8,645	131,517	140,162

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

26 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամից ստացված փոխառությունների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ին տրամադրված անտոկոս փոխառությունների գնահատված իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: 44,800 հազար դրամ գումարը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը 5.75%-ով և 5.00%-ով (փոխառության տրամադրման պահին գործող ՀՀ ԿԲ սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույք): Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է 5.75% և 5.00%:

27 Պայմանականություններ

27.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ Հարկային օրենսգրքի տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին վերաբերող գլուխը, որը սահմանում է առանձնահատկություններ՝ փոխկապակցված կողմերի միջև կատարվող գործարքների վերաբերյալ, սահմանում է հարկային մարմնի կողմից այդ գործարքները վերահսկվող համարելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ ծանուցում և փաստաթղթավորում ներկայացնելու կարգը: Նշված կարգավորումների նպատակն է պարզել, թե արդյոք փոխկապակցված կողմերի միջև գործարքների ֆինանսական ցուցանիշները համապատասխանում են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ինչպես նաև չհամապատասխանելու դեպքում՝ սահմանվում է դրանց ճշգրտման կարգը հարկման բազան հաշվարկելու նպատակով: Նշված կարգավորումների կիրառությունը ենթակա է հարկային մարմնի կողմից առանձին ստուգման և պահանջված փաստաթղթավորման բացակայությունը կամ ոչ պատշաճ ներկայացնելը կարող է հանգեցնել էական հետևանքների:

Օրենսգրքի նշված գլուխը պարունակում է շատ անորոշություններ, իսկ նախկինում Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ կարգավորումներ չեն կիրառվել: Արդյունքում՝ չկա նմանատիպ կարգավորումների մեկնաբանման և կիրառման բավարար փորձառություն:

Սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ Ընկերությունն իրականացրել է տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին համապատասխան վերլուծություն, որի արդյունքում եզրահանգել է, որ այս փոփոխության ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

28 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Խմբի ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում փոփոխությունները դասակարգվում են հետևյալ կերպ.

Ստացված փոխառություններ

Հազար դրամ

	2020թ.	2019թ.
հունվարի 1-ի դրությամբ	131,517	73,380
Դրամային հոսքերից		
Ստացված գումար	-	53,620
Ոչ դրամային հոսքերից		
Տոկոսի հաշվեգրում	6,817	5,139
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	7,097	(622)
դեկտեմբերի 31-ի դրությամբ	145,431	131,517

29 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են հիմնադիր ընկերությունը, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

29.1 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	7,789	6,670

29.2 Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնադիր ընկերություն		
Ստացված ֆինանսավորում	28,392	159,012
Ստացված փոխառություններ	-	53,620
Տոկոսային ծախս	6,818	5,138
Այլ կապակցված ընկերություններ		
Ներդրում կանոնադրական կապիտալում	-	54,239
Փոխառությունների տրամադրում	14,700	30,100
Տրամադրված անտոկոս փոխառությունների իրական արժեքով զեղչումից ծախս	2,002	6,036
Տրամադրված անտոկոս փոխառությունների զեղչման հակադարձում	1,757	473

Հազար դրամ Մնացորդներ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնադիր ընկերություն		
Հետաձգված եկամուտ	111,983	90,183
Ստացված փոխառություններ	145,431	131,517
Այլ կապակցված ընկերություններ		
Ներդրում կանոնադրական կապիտալում	67,930	67,930
Տրամադրված փոխառություններ	38,992	24,537

30 Համադրելի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2.7-ում, Խմբի քաղաքականությունը ընթացիկ տարում հայտնաբերված սխալների հետադարձ ճշգրտումն է: 2020թ. ընթացքում ղեկավարությունը որոշել է, որ 2018թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների և 2018թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունների որոշ հոդվածներ ճիշտ չեն ներկայացվել: Հետևաբար կատարվել են որոշ վերահաշվարկներ, որի արդյունք են ստորև ներկայացված ճշգրտումները:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար չէին հրապարակվել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Ստորև աղյուսակներում արտացոլված են «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումները՝ համախմբման հետ կապված և այլ ճշգրտումների արդյունքում :

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Ծանոթ.	Մինչև վերաներկայացումը	Համախմբման հետ կապված վերաներկայացման ազդեցությունը	Այլ ճշգրտումների արդյունքում վերաներկայացման ազդեցությունը	Վերաներկայացումից հետո
Ակտիվներ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ		11,042	469	7	11,518
Ներդրումներ կապակցված կազմակերպություններում		50	67,880	-	67,930
Տրամադրված փոխառություններ		-	24,537	-	24,537
		11,092	92,886	7	103,985
Ընթացիկ ակտիվներ					
Պաշարներ	a	719	-	14,889	15,608
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	b	18,772	27	(2,111)	16,688
Ժամկետային ավանդներ		-	10,000	-	10,000
Մնացորդներ դրամարկղում և բանկերում		100,579	15,105	-	115,684
		120,070	25,132	12,778	157,980
Ընդամենը ակտիվներ		131,162	118,018	12,785	261,965
Պարտավորություններ և զուտ ակտիվներ					
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Ակտիվներին վերաբերող շնորհներ	c	88,857	-	(83,621)	5,236
Ստացված փոխառություններ		-	131,517	-	131,517
		88,857	131,517	(83,621)	136,753
Ընթացիկ պարտավորություններ					
Հետաձգված եկամուտ	c	33,015	-	72,057	105,072
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	d	18,654	303	1,332	20,289
		51,669	303	73,389	125,361
Զուտ ակտիվներ					
Կուտակված արդյունք (անսահմանափակ)		(9,364)	(13,802)	23,017	(149)
		(9,364)	(13,802)	23,017	(149)
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		131,162	118,018	12,785	261,965

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Ծանոթ.	Մինչև վերա-ներկայացումը	Համախմբման հետ կապված վերաներ-կայացման ազդեցությունը	Այլ ճշգրտումնե-րի արդյունքում վերաներ-կայացման ազդեցությունը	Վերաներկայա-ցումից հետո
Ակտիվներ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ		11,953	-	5	11,958
Ներդրումներ կապակցված կազմակերպություններում		50	13,641	-	13,691
		12,003	13,641	5	25,649
Ընթացիկ ակտիվներ					
Պաշարներ	a	89,704	-	(11,390)	78,314
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	b	110,460	27	(2,111)	108,376
Ժամկետային ավանդներ		-	54,269	-	54,269
Մնացորդներ դրամարկղում և բանկերում		37,179	1,996	2	39,177
		237,343	56,292	(13,499)	280,136
Ընդամենը ակտիվներ		249,346	69,933	(13,494)	305,785
Պարտավորություններ և զուտ ակտիվներ					
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Ակտիվներին վերաբերող շնորհներ	c	92,766	-	(88,230)	4,536
Ստացված փոխառություններ		-	73,380	-	73,380
		92,766	73,380	(88,230)	77,916
Ընթացիկ պարտավորություններ					
Հետաձգված եկամուտ	c	128,069	-	75,251	203,320
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	d	17,817	130	776	18,723
		145,886	130	76,027	222,043
Զուտ ակտիվներ					
Կուտակված արդյունք (անսահմանափակ)		10,694	(3,577)	(1,291)	5,826
		10,694	(3,577)	(1,291)	5,826
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		249,346	69,933	(13,494)	305,785

Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			
	Ծանոթ.	Մինչև վերա-ներկայացումը	Համախմբման հետ կապված վերաներ-կայացման ազդեցությունը	Այլ ճշգրտումնե-րի արդյունքում վերաներ-կայացման ազդեցությունը	Վերաներկայա-ցումից հետո
Շնորհներից եկամուտ	e	894,149	-	(116,810)	777,339
Դրամաշնորհային ծախսեր	e	(906,070)	-	128,731	(777,339)
		(11,921)	-	11,921	-
Վարձակալական եկամուտ		195,978	-	-	195,978
Շենքերի պահպանման հետ կապված ծախսեր	f	-	-	(98,146)	(98,146)
		195,978	-	(98,146)	97,832
Վարչական և ընդհանուր ծախսեր	f	(185,728)	(2,796)	96,909	(91,615)
		(185,728)	(2,796)	96,909	(91,615)
Ֆինանսական եկամուտ		-	2,841	-	2,841
Ֆինանսական ծախս		-	(11,174)		(11,174)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս	g	(17,801)	907	13,621	(3,273)
Արդյունք մինչև հարկերը		(19,472)	(10,222)	24,305	(5,389)
Շահութահարկի գծով ծախս		(586)	-	-	(586)
Տարվա արդյունք		(20,058)	(10,222)	24,305	(5,975)

Ծանոթագրություններ

a 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված դեղորայքի մնացորդը զրո էր, սակայն, ելնելով դեղորայքի հաշվառման գրանցամատյանում արտացոլված տվյալներից՝ կատարվել է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեղորայքի մնացորդների ճշգրտում:

2018թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ դեղորայքի մնացորդը արտացոլված էր սկզբնական արժեքով. 11,390 հազար դրամ նվազեցումը արտացոլում է պաշարների արժեքի նվազեցումը մինչև շուկայական արժեք (տե՛ս ծանոթագրություն 3.5):

b 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր» հոդվածի նվազումը ներառում է «Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր»-ի մնացորդային տարբերությունների կարգավորումը՝ 2,111 հազար դրամ:

c 2019թ. և 2018թ. վերաներկայացումները պայմանավորված են (a) ծանոթագրությունում նշված պաշարների ճշգրտումով, շնորհների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների առանձնացումով և «Ակտիվներին վերաբերող շնորհեր» և «Հետաձգված եկամուտ» հոդվածների միջև վերադասակարգումներով:

d «Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր» հոդվածի փոփոխությունը ներառում է չօգտագործված արձակուրդային օրերի համար հաշվարկված պահուստի գծով կրեդիտորական պարտքի մնացորդը՝ 1,544 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31՝ 772 հազար դրամ) և այլ կրեդիտորական պարտքերի մնացորդների ճշգրտմամբ՝212 հազար դրամ:

e «Շնորհներից եկամուտ» և «Դրամաշնորհային ծախսեր» հոդվածների փոփոխությունները ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դեղորայքի մնացորդի դուրսգրման հակադարձումը՝ 89,015 հազար դրամ, դեղորայքի արժեքի նվազեցման արդյունքում ծախսի և եկամտի նվազեցումը՝ 41,324 հազար դրամ, որպես դրամաշնորհային ծախս հաշվառման ենթակա ապահովագրական ծախսի և եկամտի ավելացումը՝ 1,200 հազար դրամ և շնորհների հաշվին ձեռքբերված հիմնական միջոցների մաշվածության ճշգրտման արդյունքում ծախսի և եկամտի աճը՝ 408 հազար դրամ:

Վերը թվարկվածից բացի «Շնորհներից եկամուտ» հոդվածի փոփոխությունը ներառում է դրամաշնորհային ծախսերում արտացոլված, սակայն համապատասխան եկամուտներում չներառված գումարը՝ 11,921 հազար դրամ:

f «Վարչական և ընդհանուր ծախսեր»-ում փոփոխությունը ներառում է արտացոլված գումարներից վարձակալության հանձնված շենքերի պահպանման հետ կապված ծախսերի առանձնացումը՝ 98,146 հազար դրամ, որպես դրամաշնորհային ծախս հաշվառման ենթակա ապահովագրական ծախսի նվազեցումը՝ 1,200 հազար դրամ և շնորհների հաշվին ձեռքբերված հիմնական միջոցների մաշվածության ճշգրտման արդյունքում նվազեցումը՝ 408 հազար դրամ և այլ ճշգրտումներ՝ 2,845 հազար դրամ:

g 2019թ. ֆինանսական հաշվետվություններում «Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս»-ում արտացոլված ծախսի գերագնահատման ճշգրտում՝ 13,621 հազար դրամ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.01.2022 12:31